

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
14-Ի ԹԻՎ ԹԻՎ 16-Ա, 18-Ա, 19-Ա, 20-Ն ԵՎ 21-Ն
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 16-Ա և 18-Ա որոշումների դրույթները սխալ են համարակալված:

Թիվ 18-Ա որոշման բովանդակության մեջ «սահմանել» բառից հետո լրացնել «յուրաքանչյուր ամիս» բառերը:

Թիվ 19-Ա որոշման բովանդակության մեջ անհրաժեշտ է գրառել 2020 թվականին իրականացված գույքագրման օրն ու ամիսը: Բացի այդ, որոշման դրույթները սխալ են համարակալված:

Թիվ 20-Ն որոշմամբ հաստատված հավելվածների դրույթները սխալ են համարակալված:

Որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետում «համար» բառից հետո ավելացնել նոր 1) ենթակետ և խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝» նախադասությունը: 11-րդ կետի 5-րդ ենթակետում գրառված «տուրքի» բառից հետո լրացնել «25%-ի չափով» բառը, իսկ 6-րդ ենթակետում՝ «համար» բառից հետո լրացնել «սահմանված տուրքի 10%-ի չափով» բառերը:

Որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետի 7.2) ենթակետի «դ» պարբերությունում սահմանված չէ տեղական վճարի կոնկրետ դրույքաչափ (երեքից մինչև տասն Հայաստանի Հանրապետության դրամ):

Թիվ 21-Ն որոշման 1-ին կետում «հավելվածի» բառը փոխարինել «N 1, N 2, N 3, N 4 հավելվածների»:

Որոշման մեջ ներառված չէ համայնքի ղեկավարի 2021 թվականի բյուջետային ուղերձը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքի ղեկավարն ամփոփում է սահմանված ձևերով ներկայացված տվյալները և կազմում համայնքի բյուջեի նախագիծը, որը բաղկացած է համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից:

Որոշումներում տեղական ինքնակառավարման մարմինների անվանումներն անհրաժեշտ է գրառել ամբողջությամբ:

*Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
20.01.2021թ.*